

**ՊՐՐՊԵՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒՅԻՆ՝ ՏԻԿԻՆ ԱՆՃԱ ՌԷՆՔԻ
Կ'ԱՅՑԵԼԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Հինգշաբթի, Յուլիս 1ի կեսօրին Պրրպենքի Քաղաքապետուհին՝ Տիկին Անճա Ռենքի այցելեց Առաջնորդարան եւ սիրալիր կերպով դիմաւորուելով առաջնորդուեցաւ դէպի Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճ, ուր Սրբազան Հօր կողմէ հրաւիրուած մտերմիկ շրջանակի մէջ հիւրասիրուեցաւ եւ ապա Սրբազան Հօր գլխաւորութեամբ շրջագայեցաւ Մայր Եկեղեցւոյ Համալիրէն ներս եւ իր գոհունակութիւնը յայտնեց, որ Պրրպենք Քաղաքին մէջ հիանալի կերպով կառուցուած եկեղեցի մըն է, ուր հաւատացեալները պիտի հաւաքուին եւ իրենց աղօթքները բարձրացնեն Աստուծոյ: